ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 մայիսի 2023 թվականի թիվ 48-Ա

ք.Երևան

«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով սեփական նախաձեռնության հիման վրա 2023 թվականի ապրիլի 20-ին հարուցված թիվ 18 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

Հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 14-Ա հրամանը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու նպատակով եղել է «Ֆրութնեթ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ ցանցային օպերատոր) գործունեության վայրում, որի արդյունքում արձանագրել է հետևյալը.

1. 2023 թվականի ապրիլի 18-ին ժամը 12:30-ից մինչև 13:00-ն տեղում դիտարկում իրականացնելու նպատակով գտնվել է ցանցային օպերատորի գործունեության հասցեում՝ ք. Բյուրեղավան, Ս. Վարդանյան փ. 19 շ.,
2. տեղում դիտարկում իրականացնելու համար ցանցային օպերատորը չի ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներով,
3. ցանցային օպերատորի ղեկավարը կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձը տեղում դիտարկման վայրում չի եղել:

Ղեկավարվելով Օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ մասով՝ Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի եւ վերահսկողության վարչությունը 2023 թվականի ապրիլի 20-ի թիվ Ե/16/165-23 գրությամբ՝ օպերատորների գործունեության տեղում դիտարկման արդյունքների վերաբերյալ 2023 թվականի ապրիլի 18-ին կազմված արձանագրության մեկ օրինակը փոստով առաքել է ցանցային օպերատորին:

Ընդ որում, ցանցային օպերատորը, ի պատասխան Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի եւ վերահսկողության վարչության գրությանը՝ 2023 թվականի ապրիլի 25-

ին Հանձնաժողով է հասցեագրել ***ՄԳ/346-23*** գրությունը (այսուհետ՝ ***Գրություն կամ Առարկություն):***

Ցանցային օպերատորը համաձայն *«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի*՝ արդարացնում է իր գործողությունները, մասնավորապես.

«Ընկերությունը փաստում է, որ Հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից չի պահպանվել ստուգումներ անցկացնելու կարգին վերաբերող օրենսդրական պահանջը, այն է՝ ստուգումը սկսելուց առաջ համապատասխանում է հրամանի օրինակը որևէ ձևաչափով չի տրամադրվել Ընկերության տնօրենին կամ նրա կողմից լիազորված անձին՝ մշտադիտարկում սկսելուց առնվազն երեք օր առաջ, որն էլ հնարավորություն կտա Ընկերության ներկայացուցիչներին ողջամիտ ժամկետում տեղեկանալու և ապահովելու Ընկերության համապատասխան ներկայացուցչի ֆիզիկական ներկայությունը մշտադիտարկում կատարելու վայրում: Ավելին, Հանձնաժողովի ներկայացուցչի կողմից մշտադիտարկում անցկացնելու մասին տեղեկացվել է հեռախոսազանգի միջոցով, երբ Հանձնաժողովի ներկայացուցիչները գտնվում էին ստուգման վայր գնալու ճանապարհին և տրամադրվել է ընդամենը 20 րոպե ժամանակ՝ ստուգում անցկացնելու վայր հասնելու և/կամ լիազոր ներկայացուցչով ապահովելու, այն է լիազորագիր պատրաստելու, տալու և այլ գործողությունների կատարելու համար՝ խախտելով Ընկերության ուղղակի իրավունքը ողջամիտ ժամկետում տեղեկանալու և օրենսդրությամբ սահմանված իրավունքներն իրացնելու և պարտավորությունները պատշաճ կատարելու համար:

Հանձնաժողովի նախագահի կողմից արձակված հրամանը, որի մասին նշվում է բացառապես արձանագրության մեջ չի տրամադրվել Ընկերությանը ծանոթացման և ոչ էլ ուղարկվել է արձանագրությանը և գրությանը կից: Ավելին, այն թվագրված է 12-ը ապրիլի 2023 թվական, որն էլ հիմք է տալիս ենթադրելու, որ մինչև ստուգումների անցկացման օրը, այն է՝ 2023 թվականի ապրիլի 18-ը, առնվազն երեք օր առաջ պետք է այս կամ այն կերպ հայտնի դարձվեր Ընկերության ներկայացուցիչներին: Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի ուսումնասիրությունը ևս հիմք է տալիս, փաստելու, որ հրամանը չի հրապարակվել՝ դրանով խախտելով նաև Օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքները:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, մասնավորապես այն, որ Հանձնաժողովի կողմից մշտադիտարկում իրականացնելու ընթացքում խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթները, արձանագրում եմ, որ Իրավասու անձինք օպերատորի գործունեության վայրում չեն կամ հրաժարվում են ստանալ տեղում դիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը և ստորագրությամբ հավաստել այն ստանալու փաստը, ինչպես նաև դրա հետ ասոցացված նաև տեխնիկական միջոցներով և տարածքով չապահովելու ՊՆԴՈՒՄԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ԴԻՏԵԼ, քանի որ՝ անհնարինության կար դրանք ապահովելու, Հանձնաժողովի կողմից իր պարտավորությունների ուղղակի խախտման արդյունքում, այն է՝ մշտադիտարկում իրականացնելու մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պատշաճ չծանուցելու հետևանքով»:

Այսպիսով, ցանցային օպերատորը Գրությամբ պնդում է, որ Հանձնաժողովի կողմից խախտվել են իր պարտավորությունները, ըստ որի ցանցային օպերատորը մշտադիտարկում իրականացնելու մասին օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում պատշաճ չի ծանուցվել:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2023 թվականի ապրիլի 20-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի ապրիլի 20-ին ծանուցել է Ցանցային օպերատորին եւ հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումներն ու բացատրությունները:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) եւ եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության եւ գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետեւյալը.

«Ֆրութնեթ» ՍՊ ընկերությունը Հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 07-ի որոշմամբ լիցենզավորվել է և լիցենզիայի գործողության ժամկետը սահմանված է մինչև 2029 թվականի հոկտեմբերի 08-ը: Նշենք նաև, որ և՛ 2021 թվականին, և՛ 2022 թվականին ցանցային օպերատորի մոտ իրականացվել են տեղում դիտարկումներ, որի արդյունքում հարուցվել են վարչական վարույթներ և ցանցային օպերատորի նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր՝ տուգանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանցային օպերատորն իր բացատրությունները, պարզաբանումները ներկայացրել էր «Առարկություն» վերտառությամբ փաստաթղթով եւ իր առարկությունները կառուցել էր «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների անցկացման եւ կազմակերպման մասին» օրենքների դրույթների վրա՝ Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել հետեւյալը.

Օրենքի **<u>2-րդ հոդվածի 1-ին մասը</u>** սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը»:

Վկայակոչված նորմից պարզ է դառնում է, որ տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունն իր բնույթով, ինչպես նաեւ ողջ ծավալով ներկայանում է որպես, այսպես կոչված, *հատուկ նորմ,* որպիսի պարագայում՝ Օրենքում նկարագրված օրենսդրությունը ստանում է առաջնային կիրառության իրավունք: Հանձնաժողովի համար

անհասկանալի է ցանցային օպերատորի կողմից վկայակոչված օրենքը, ինչպես նաեւ օրենքի պահանջները, քանի որ Օրենքը հստակ սահմանում է տեղում դիտարկում իրականացնելու կարգը, ինչպես նաեւ վերջինիս ծանուցման պահանջները:

Այսպես, Օրենքի **<u>42-րդ հոդվածի 5-րդ մասի</u>** համաձայն.

«Օպերատորի մոտ տեղում դիտարկումն սկսելուց առաջ հրամանի մեկ օրինակը հանձնվում է օպերատորի ղեկավարին կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձին:»:

Օրենքի վկայակոչված դրույթը գալիս է ողջ ծավալով հերքելու այն պնդումները, որոնք Գրությամբ արձանագրվել էին ցանցային օպերատորի կողմից:

Ցանցային օպերատորն իր Առարկությունում արել է հետեւյալ արձանագրումները.

«(...) Հանձնաժողովի կողմից ստուգումների անցկացման կարգի խախտում է թույլ տրվել նաեւ Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, քանի որ տվյալ ստուգման համար գործում է ընդհանուր օրինաչափություն՝ այն է ***«Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ, պատշաճ ձեւով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին»*** *(Հրամանի օրինակը փաստացի չի հանձնվել, իսկ ստուգման անցկացման եւ նպատակի վերաբերյալ, այն է փաստացի կատարված իրավախախտումների մասին, ինչպես նաեւ տնտեսվարող սուբյեկտի իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ Ընկերության ներկայացուցիչը չի տեղեկացվել՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից հայեցողական եւ կամայական սկզբունքների կիրառման հավանականությունը:)»:*

Համադրելով Օրենքի պահանջները եւ ցանցային օպերատորի կողմից արձանագրված պնդումները, մեկ անգամ եւս փաստենք, որ վերջինիս կողմից արված պնդումները որեւէ իրավական հիմք ու հետեւանք ունենալ չեն կարող, ինչպես նաեւ չեն կարող հանդես գալ որպես **արդարացում՝** վարչական պատասխանատվություն չենթարկվելու համատեքստում:

Իր Առարկությունում ցանցային օպերատորն արձանագրել է նաև, որ *«(...) Հանձնաժողովի անգործությունը հանգեցրել է նաեւ տնտեսվարող սուբյեկտի իրավունքի իրացման խոչընդոտի, այն է՝ ծանոթանալու իր իրավունքներին եւ պարտականություններին, ստուգման անցկացման ձեւաչափին, նպատակին, իրավախախտման բնույթին:»:* Ցանցային օպերատորի կողմից վկայակոչված կամ արձանագրված միտքը ողջ ծավալով անհիմն է, այն պարզ պատճառով, որ Հանձնաժողովը, ղեկավարվելով տեսալսողական մեդիայի մասին օրենքի պահանջներով, ողջ ծավալով կատարել է օրենսդրությամբ նախանշված իր պարտականությունները: Այդ ամենի ապացույցը Հանձնաժողովի նախագահի **2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 14-Ա հրամանն է** (այսուհետ՝ ***Հրաման***) Ավելին, Օրենքի **<u>42-րդ հոդվածի 4-րդ մասի</u>** համաձայն.

«4. Տեղում դիտարկում իրականացնելու մասին հրամանում նշվում են՝

1) տեղում դիտարկում իրականացնող մարմնի անվանումը.
2) օպերատորի անվանումը եւ գտնվելու վայրը.
3) տեղում դիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը.

4) տեղում դիտարկում իրականացնելու նպատակը, ժամանակահատվածը եւ իրավական հիմքերը.
5) տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման նկարագրությունը:»:

Այսպիսով, Օրենքը հստակ սահմանում է Հանձնաժողովի նախագահի կողմից արձանագրված հրամանը ինչ բովանդակություն պետք է ունենա: Ցանցային օպերատորը կարող էր եւ իրավունք ուներ ծանոթանալու Հրամանի օրինակի հետ, ավելին, Հանձնաժողովի աշխատակիցը՝ որպես պետական պաշտոնատար անձ, պարտավոր էր Հրամանի մեկ օրինակը հանձնել ցանցային օպերատորի ղեկավարին կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձին: Սակայն, ըստ արձանագրության, տեղում դիտարկման վայրում չի եղել ո՛չ ցանցային օպերատորի ղեկավարը, եւ ո՛չ էլ վերջինիս փոխարինող մեկ այլ անձ:

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ ի պատասխան Առարկությունում տեղ գտած այն պնդմանը, համաձայն որի *«(... Հանձնաժողովի նախագահի կողմից արձակված հրամանը) առնվազն երեք օր առաջ պետք է այս կամ այն կերպ հայտնի դարձվեր Ընկերության ներկայացուցիչներին:Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի ուսումնասիրությունը եւս հիմք է տալիս փաստելու, որ հրամանը չի հրապարակվել՝ դրանով խախտելով Օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված թափանցիկության, հրապարակայնության եւ հաշվետվողականության սկզբունքները:»,* ապա ևս մեկ անգամ նշենք, Հանձնաժողովը չունի որեւէ պոզիտիվ պարտականություն: Հանձնաժողովի վրա դրված չէ որեւէ պարտականություն առ այն, որ տեղում դիտարկում անելու մասին Հանձնաժողովի նախագահի հրամանը պետք է երեք օր առաջ այս կամ այն կերպ բացահայտվեր ցանցային օպերատորի համար, կամ հրապարակվեր Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Սույն համատեքստում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը հստակ արձանագրում է Հանձնաժողովի վարքագիծը՝ քննարկվող հարցի համատեքստում: Օրենսդիրը հստակ ձեւակերպել է Հանձնաժողովի պարտականությունը. *օպերատորի մոտ տեղում դիտարկում սկսելուց առաջ հրամանի մեկ օրինակ հանձնվում է օպերատորի ղեկավարին կամ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձին:*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **<u>6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.</u>**

«Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:»:

Սահմանադրության վկայակոչված նորմը հստակ արձանագրում է Հանձնաժողովի լիազորությունների եւ պարտականությունների շրջանակը՝ առաջնորդվել ու գործունեություն ծավալել տեսլասողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության շրջանակներում: Ցանցային օպերատորի կողմից վկայակոչված օրենքը չի տեղավորվում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության ծավալների եւ բովանդակության մեջ, ուստի չի կարող տարածվել Հանձնաժողովի վրա՝ Սահմանադրության ուժով:

Իր Առարկություններում ցանցային օպերատորն ամրագրել է հետեւյալ միտքը.

«Ավելին Հանձնաժողովի ներկայացուցչի կողմից մշտադիտարկում անցկացնելու մասին տեղեկացվել է հեռախոսազանգի միջոցով, երբ հանձնաժողովի ներկայացուցիչները գտնվում էին ստուգման վայր գնալու ճանապարհին եւ տրամադրվել է ընդամենը 20 րոպե ժամանակ՝ ստուգում անցկացնելու վայր հասնելու եւ/կամ լիազոր ներկայացուցչով ապահովելու, այն է՝ խախտելով Ընկերության ուղղակի իրավունքը ողջամիտ ժամկետում տեղեկանելու եւ օրենսդրությամբ սահմանված իրավունքներն իրացնելու եւ պարտավորությունները պատշաճ կատարելու համար:»:

Սույն պարբերության համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է հետեւյալը.

1. Ցանցային օպերատորը, փաստացի ընդունել է այն, որ տեղում դիտարկման վայրում չի եղել ո՛չ օպերատորի ղեկավարը, եւ ո՛չ էլ ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող որեւէ անձ:
2. Ցանցային օպերատորը որեւէ կերպ չի հիմնավորում, որ վերջինս Հանձաժողովի ներկայացուցիչներին ապահովել է անհրաժեշտ սարքավորումներով՝ տեղում դիտարկում իրականացնելու նպատակով: Ցանցային օպերատորը որեւէ կերպ չի մատնանշում կամ բացահայտում այն, որ օպերատորի ղեկավարի կամ ղեկավարին փոխարինելու իրավասություն ունեցող անձի բացակայությամբ տեղի է ունեցել դիտարկում: Ավելին, Հանձնաժողովի աշխատակցի կողմից արված արձանագրությունից հստակ երեւում է, որ Ցանցային օպերատորը չի ապահովել անհրաժեշտ սարքավորումներով տեղում դիտարկում իրականացնելու համար: Սա փաստում է, որ առանց այդ սարքավորումների տրամադրման հնարավոր չէր լինելու դիտարկում անել. սույն համատեքստում խոչընդոտվել է Հանձաժողովի օրիանական գործողությունների եւ պարտականությունների իրականացումը:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետեւանքներ եւ ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար եւ տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող իրավական պահանջները:

<u>Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի</u> համաձայն՝ Օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում վերջինս տեղում դիտարկում իրականացնող անձանց պետք է ապահովի անհրաժեշտ աշխատանքային տարածքով եւ տեխնիկական միջոցներով:

Արձանագրությունից պարզ է դառնում, որ ցանցային օպերատորը ոչ միայն տեղում չի գտնվել, այլեւ չի ապահովել համապատասխան սարքավորումներով, որպիսի պարագայում խոչընդոտել է Հանձնաժողովի բնականոն աշխատանքի իրականացմանը, ինչպես նաեւ չի ապահովել Հանձնաժողովի նախագահի Հրամանի իրացումը:

<u>Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝</u> կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

<u>Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասով՝</u> մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

<u>Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝</u> կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաեւ պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու եւ դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետեւյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.
2) տուգանք.
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

<u>Օրենքի 57-րդ հոդվածի 19-րդ մասը</u> սահմանում է.

«Սույն օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պայմանները չապահովելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.01 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաեւ ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 42-րդ հոդվածի 4-րդ, 7-րդ եւ 18-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով եւ հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 19-րդ մասը՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 19-րդ մասով սահմանված վարչական տույժը, տուգանելով սահմանված 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

22 մայիսի 2023թ.
ք.Երևան